



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ «ԽԵԼԱՑԻ» ՈՒՂԻՆԵՐԸ»

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոնն հասարակական կազմակերպությունը ««ՀամաՉարԿ» կոալիցիայի կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում **2019 թվականի հունիսի 27-ին Գյումրիում** կազմակերպում է «**Հայաստանի համայնքների հիմնախնդիրները, դրանց լուծման «խելացի» ուղիները**» թեմայով երիտասարդական գիտաժողով:

Ովքեր կարող են մասնակցել գիտաժողովին

Գիտաժողովին կարող են մասնակցել բոլոր համայնքների մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականները, հայաստանյան բուհերի ու գիտահետազոտական կենտրոնների ասպիրանտները/ հայցորդները, մագիստրանտներն ու 2-րդ և բարձր կուրսերի ուսանողները:

Գիտաժողովի ընթացքում մասնակիցները հնարավորություն կունենան բարձրաձայնել Հայաստանի համայնքներում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման «խելացի»¹ ուղիները:

Գիտական հոդվածներին ներկայացվող տեխնիկական պահանջներ

Համակարգչային շարվածքը` MS Word 2003-2016 ծրագիր:

Էջի ֆորմատը` B5 (176*250 մմ), լուսանցքները բոլոր կողմերից` 20 մմ:

Ծավալը` 7-15 էջ` ներառյալ ամփոփագրերը:

Տեքստի տառատեսակը` հայերեն` Arial

AMU (*տառատեսակը կարող էք բեռնել այստեղից*), ռուսերեն և անգլերեն` Times New Roman:

Հոդվածի ներկայացման լեզուն` հայերեն:

Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը:

¹ Աշխարհում կան քաղաքներ, որոնք ունեն այնպիսի ենթակառուցվածքներ, որոնք հնարավորություն են տալիս այդ քաղաքներին կոչել «խելացի» (Smart city):

Սույն ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշտորհի շրջանակներում իրականացվող ««ՀամաՉարԿ» կոալիցիայի կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից` իր գործընկերներ «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության, «Դիվիզանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ:



Մեկ տող բաց թողնելով տողի մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) տրվում են հեղինակ(ներ)ի Անուն Ազգանուն(ներ): Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) տրվում է աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:

Մեկ տող բաց թողնելով անհրաժեշտ է գրել «**Բանալի բառեր**» և նշել 7-10 բանալի բառեր:

Մեկ տող բաց թողնելով անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1. 15: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (Alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից:

Աղյուսակներն ու գծապատկերները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր:

Հղումները պարտադիր են. տրվում են տողատակում, աճման կարգով՝ 10 pt տառաչափով:

Նշված չափորոշիչներին չհամապատասխանող հոդվածները չեն քննարկվելու:

Գիտաժողովի ընթացքում ելույթների տևողությունը չի կարող գերազանցել **10 րոպե**ն:

Երեք լավագույն հոդվածները կարժանանան խրախուսական միջանակի:

Առավելություն կտրվեն այն հոդվածներին, որոնք իրենց մեջ կներառեն «խելացի» քաղաքների փորձի ուսումնասիրումն ու դրա ներդրման հնարավորությունները Հայաստանի համայնքներում:

Մասնակցության համար անհրաժեշտ է

Մինչև 2019թ. Հունիսի 9-ը hamazarkarmenia@gmail.com էլեկտրոնային փոստին ուղարկել գիտական հոդվածը և հեղինակի հակիրճ ինքնակենսագրականը: Նամակի վերնագրի դաշտում պետք է նշել «Գիտաժողով-2019»:

Կապ կհաստատվի միայն վերոնշյալ չափանիշներին բավարարող հոդվածների հեղինակների հետ:

*Լրացուցիչ հարցերի դեպքում դիմել ծրագրի համակարգող Մարինե Ավետիսյանին
Հեռ.՝ 077190895
Էլ փոստի հասցե՝ marineavetisyan95@gmail.com*

Սույն ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշտորհի շրջանակներում իրականացվող «ՀամաՉար4» կոալիցիայի կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «Հ4 կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության, «Դիվիզանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ: